

4. Φοιλογή διαδικαρπή Σωρτείκων	100	ηλ.
Φ. έγωασμένη,,	55	,,
Φωτισμένη διαδικαρπή Σωρτείκων	110	,,
Φ. έγωασμένη,,	60	,,
Συλλογή πριν την έγωαση	2	ηλ.
Συλλογείσασθαι την ηρη μετά την έγωαση	3	ηλ.



ՀՐԱԳԻՐ

Τηνερο ḥωσιαծ լրազբաց նամբու ծափ-
քը Խմբագրութեան վրայ է:

Երազքոյս վերաբերեալ նամակ կամ ոք
եւ իցք գրաւթիւն Խմբագիր=Տօնորէ
նին պիտի ուղղուի . եւ նամբռու ծախ
քըն ալ դրկազին փրայ է:

ԳԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՄԻՐԱԿԱՆ ԵՒ ՏԱՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ Յ ՅՈՒՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՐ

Վաղաքական եղեռնադործութիւնները ներկայ դարուս մէջ ալ տակաւին կը շարունակեն, եւ նոյն պատճառները որք հին ատենուան բունաւորները շարունակ կասկածանօք իրենց պալատներուն էից փակեալ կը պահէին, հիմա ալ մի եւ նոյն արդիւնքը կը ծնին: Ուուսիոյ կայսեր կենաց գէմ երկրորդ գաւադրութիւն մ'ալ եղաւ, բայց այս անդամ օտար մայ բաքաղաքի մը մէջ, եւ գրեթէ դարձեալ հրաշիւք անմնաս աղատեցաւ: Սայդ է որ Առուրավիէֆներուն եւ Պէրկերուն Լեհաստանի մէջ 'ի դործ դրած անգթութիւնները, ամբողջ ազգի մը իր իրաւունքն զրկուիլը, եւ հաղարաւորներու ալ Ախպէրիոյ սառնապատ խորեն աքսորուիլը մեծ դժძբաղդութիւններ են, բայց որո՞ւ վրայ կիյնայ ասոնց պատասխանատուութիւնը, եթէ ոչ դրութեան մը՝ որոյ փոփոխութեանը կամ բարեկարգութւութեանը սրլցցամութիւնը տիւ իրաւացի է. սակայն զայն անձնաւորով մարդոց կենացը գէմ զէնք շողացընելլը՝ գատին արդարութիւնը յանօգուտս պղծել է. քանզի սպանելցն տեղ ուրիշ մը կը յաջորդէ, եւ դըրութիւնն առաւել եւս ինքինք արդարացած կարծելով՝ իր բռնական գործը կը շարունակէ: Եհա ասոր համար Վզէքսանդր կայսեր կենաց գէմ քանամեայ Լեհ պատանւոյ մը ըրած գաւադրութիւնն առաւել մուլտնութեան գործ համարելու է քան

թէ արդարախոհ հայրենասիրութեան .
ուստի Գրազդիոյ մամուլն , ազդային
ժողովներն եւ հասարակաց կարծիքն
ընդհանրապէս այսպանեցին այս եղեռ-
նական փորձը , ինչպէս նաեւ Օսմօ-
յիսքի լեհ զօրապետն ալ յատուկ բո-
ղոքով լմը դատապարտեց : Ի այց երթեմն
այնպիսի մոլեգնուութիւններ կան որ պազ
արեամբ կը գործուին : ԵհԿ պատահն
ւոյն քննութենէն կը տեմնուի որ ամեն
բան կանխաւ խորհած եւ վտանգնե-
րըն աչքն առած է եղեր . քանզի կը
խոստովանի թէ առանց դաւակցի
Պէլճիքայէն Փարիզ գացեր է իր միտ-
քը գրած գործն ՚ի գլուխ հանելու .
թէ գիտէ որ այս գործը գաղղիական
հիւրասիրութեան դէմ էր , բայց իր
նպատակն Ազէքսանդր կայսրն սպան-
նել էր եւ ոչ զ՛վարօլէմն կայսրը , եւ
կը ցաւի որ իր նպատակին չէ հասեր :
Այսպէս ահա հայրեննեաց թշուառու-
թիւնը պատահեաց մը սիրազ ծայրա-
յեղ զգացմամբը կը բորբոքէ , եւ իր
հասակին թեթեւութեամբ՝ ինչպէս
բարձր գործերու՝ այնպէս ալ ծանր
ո՞րս մը զայն կը մղէ . ուրիշ եղեռներէ
նագուած ձեռք ո՞յն բարդապահութան ուղարկ-
նագուած ձեռք անուն մէջ կը թագմախի :
Խ՞նչ դատաստան ընելու է ասոր վը-
րայ . — հարկաւ Գրազդիոյ ատեան-
ներն ամենայն արդարաւթեամբ պիտի
դատեն . բայց այս դատաստանէն մա՞ս
տիտի ելնէ թէ կեանք . — տեսնենք :

Վ.Դ.Քասանդր կայսրը Շէքրապուր
կէն մեկնելէ առաջ Գալղիոյ հաճելի
ըլլալիք միջոցներ ՚ի գործ դրած էր .
իր հրամանաւ իրենց հայրենիքը դար
ձան Լ. Եհատանի ապստամբաց խում

բերուն մէջ բռնուած երեսունի չափ
գաղղիացիները՝ որք Ախպերիա աքսոր-
ւած էին . Եհաստանի վերջին ա-
պլստամբութեան պատճառաւ տա-
կաւին կախ մնացած գատերը գադ-
րեցան . հասարակ ոճիներ գործող-
ներն ի բայ առեալ . Եհաստանի ա-
պլստամբութեան մասնակից ամբաս-
տանուողներուն ներուամ չնորհուեցաւ .
Ուուսիոյ մէջ արդիկուած լեհացիներէն
գոհացուցիչ ընթացք ցոյց տուողնե-
րուն եւ եկեղեցականաց՝ իրենց հայ-
րենիքը գառնալու հրաման տրուե-
ցաւ , Եհաստանի արեւմօետն գա-
ւառաց բնակիչներուն եւ եկեղեցա-
կանաց , զորս կառավարութիւնը հե-
ռացուցած էր , գարձեալ իրենց եր-
կիլն երթալ նատելու արածոնութիւն
չնորհուեցաւ : Աակայն այս գովելի
ներողամտական ընթացքը քիչ մուշ
բռնուեցաւ եւ Փարիզի մէջ ալ ուշ
իմացուեցաւ . եւ թէպէտ Կարօլէնն
կայսրն ամեն բան ըրաւ , մինչեւ ան-
գամ Գըրըմի պատերազմին միտալ-
ները գաղղիական զօրոց կուրծքին
վրայէն վերտօնեւ տուաւ իւ զայնո՞ւա-
կան մէջ արեւու գամոր , բայց
տռ.կաւին Եհաստանի դիակը ջերմ
եւ պաղցիացւոց անոր նկատմամբ ու-
նեցած համակրութիւնն ալ կենդանի
ըլլալուն , Ըղէքսանդր կայսրն ալ Փա-
րիզի մէջ ստէալ ստէալ « կեցցէ՛ Եհ-
հաստան » աղաղակիները լսեց :

Այս անհաճոյ ցոյցերը թերեւս Ա-
ղէքսանդր կայսեր մոքին մէջ լաւ տը-
պաւորութիւն մը չձգեն փարիզցւոց
քաղաքավարութեան վրայ . սակայն
դոնէ քաղաքական մասին աւելի բա-

բերաղդ գտնուեցա՞ւ արդեօք : Առ-
բեքարթի օրը Ուսւսիոյ կայսրը Փա-
րիզէն մեկնեցաւ . երեկ ալ Շրուսիոյ
թագաւորը, եւ ասոնց պիտի յաջորդեն
ուրիշ վեհապետներ : Ամեն մարդ կրնայ
հասկնալ որ վեհապետական երթե-
ւեկները բոլորովին առանց քաղաքա-
կան նպատակի պարզ ուղեւորութիւն-
ներ չեն կրնար ըլլալ : Կըսուէր թէ
Վղեքսանդր կայսրը 1856ի դաշնադ-
րութեանց վերաբննուելուն վրայ Յա-
սովէոն կայսեր հետ պիտի խօսակցէր.
հիմա ալ կըսուի թէ Օգոստ . Սուլ-
թանին՝ի Փարիզ ուղեւորութիւնն Ա-
ռեւելեան խնդրոյն յուղումն ետ ծգեր
է . թէ քանի մը այէրութիւններ միաբա-
նած էին որ Վրեւելեան քրիստոնէից
լիճակլ քննելու համար իրենց երես-
փոխաններէն յանձնաժողով մը կազ-
ևն , բայց Անգղիա հաճութիւն տը-
ած չէր ասոր . եւ թէ անկարելի
է որ Օգոստ , Սուլթանին Փարիզ
դղած ժամանակ ինչ ինչ խնդիրներ
է . Ա . վեհափառութեան եւ Յա-
սովէոն կայսեր մէջ ուղղակի խօսակ-
ութեամաս սլլու լուլլու

Թօղղով որ գեղեցին այս զրոյցնե-
ուն վաւերականութեան աստիճանը
յայտնեն կամ արդասիքը ցոյց տան ,
անցնինք Տաճկաստանի մէջ Անգղիոյ
գեւսպանին կամ հիւ պատուներուն Վ-
ռեւելեան քրիստոնէից լիճակին նկատ-
ամբ իրենց տէրութեան ուղղած տե-
յեկագրերուն վրայ ալ քանի մը խօսք
ունելու : Վրդէն ծանուցած ենք որ
արարի 6 ին Անգղիոյ խորհրդարանը
կառավարութենէն խնդրած էր որ
Տաճկաստանի քրիստոնեայ հպատա-

THE WILKINSON

Քանի մը խօսք առ տրամախօսակից բարեկամն : — Ա. վարդապետին վարուց դժուագները . — Զարմանալի առակ մը . — Գուառական հայոց զլուխը թեթեւ ցընելու դրականնեան եղանակ մը . — Ա. վարդապետին ուրիշ արտակեզրոնութիւնները . — Զաթաղ-թագ եւ հրատարակութեան լոյսը . — Հոռմէական հայ վարդապետներ . — Պապին սխալականութիւնը Պապի մը խոստ վանութեամբ հաստատուած . — Հոռմէական եւ լուսաւորչական Պատրիարքարանաց Դիրան քով հաւասարութիւնը . — Կրօնական ներողութեան որ կողմը ըլլալը . — Կաթողիկ հայոց հալածանաց բուն պատճառ ձիգիթներն ըլլալուն կաթողիկ պատմառաց մեջ միասութիւնը . — Խոռապան ապօռ մ

Ազնիւ բարեկամք .
Որո՞ւդ ուղղեմ այս արամախօսու-
թիւնը , սրո՞ւդ մասնաւոր պատասխան
տամ , և ո՞րդ նախամեծար համարիմ :
Լաւագոյն չըլլա՞ր բնական պարզու-
թեան հետեւլով՝ի բաց թողուլ «նա-
խամեծար » բառը , որ անկեղծ բարե-
կամաց մէջ գործածուելու անվայի ել :
Սայդ է որ ձեր գրածներուն առան-

ձին առանձին պատասխաններ չպիտի
կը նաև տալ, բայց ի՞նչ հարկ կայ մի
և նոյն նիւթն առնուշ անցնիլ . ես զա-
նազանութիւնը կը սիրեմ . միթէ մեք
Սախիմ ստորոտը փիլխովայական
խնդրոց վրայ լարա՞ն բայցած ե՞ք . ա-
մենևին ոչ, այլ իւրաքանչիւր ոք իւեն
ներկայացած նիւթերուն վրայ գտղա-
փար մը կը յայտնէ, մերթ լուրջ, մերթ
թեթև կերպիւ . կարծ խօսքով, նիւ-
թոց զանազանութիւն, կարելի եղածին
չափը ըստ պատշաճի զուարձախօսութիւն
մանաւանդ ծիծաղաշարժ գործոց բա-
րուց և սովորութեանց գէմ հեգուու-
թիւն . Սակայն կրնանք ուրիշ նիւթե-
րու ալ անցնիլ, քանզի տրամախօսը
սահմանի ներքեւ փակուելու պարտա-
ւորուած չէ, այլ հնձելու է ուր որ հաս-
կեր տեսնէ . Ահա այս է տրամախօսու-
թիւնը, որ իրեւ լընտանեկան գրական
կամ զանազան նիւթոց վրայ խօսակ-
ցութիւն և խորհրդածութիւն՝ ըստ
ինքեան բնական բան մ'է . ուստի չկըր-
նար ումանց կարծածին պէս նորաձեւու-
թիւն ըլլալ կամ նորաձեւութենէ ել-
նել . Եթէ լնթերցողները տիսղուեն
ձանձրոյթ մը յայտնեն, կրնայ փոխ-
ւիլ, բայց հիմը մի և նոյն է .

Երժանապատիւ վարդապետը քա-
րոզութիւն և առաջնորդութիւն ըրած
և միշտ իր տարօրինակ տաղանդը փայ-
լեցնելու առիթ ունեցած է . Դեռ
անյեւալ մեծ պահքին մայրաքաղաքիս
թագերեւն մէկուն մէջ քարոզելով՝ զար-
մանալի պատմութիւնն մը կընէ ունկըն-
դըրաց ուշագրութիւնն իր բեմբասա-
ցութեան վրայ հրաւիրելու և ձգե-
լով գուրս ենողներն արդիելու հա-
մար . Առենօք , կը պատմէ վարդապետը ,
գիւղի մը մէջ տէրտէր մը Պատարագ
ըրած ատեն եկեղեցիէն ժողովրդեան
քաշուին ու մարդ չմնալը տեսնելով ,
Կեցո՛ Տէրին ժամանակ սկիհիր բարձրա-

Աղնելով կըսէ. կեցո՛ Տէր զիսալինե՛րս քայ
և օր հնեա՞ զԱրինտէրնե՛րս քոյ. Վար-
դապեան ասկէ կը հետեւցընէ , որ եթէ
Խողովուրդն իր քարոզը մարիկ չընելով
Նեկեղցին կիսատ ձգէ և դուրս ենէ ,
նոք աւ վերոյիշեաւ տէրտէրին ըսածը
Արկնելու պիտի պարտաւորի . Վըդարե-
գեղցի՞կ օրինակ և ճարտասր նմանաբա-
ռութիւն :

Բայց ասիկա Ա . վարդապետին վը
այ պատմուածներուն հարիւրէն մէ^ւ
ըն ալ չէ տակաւին . Իր գաւա-
ւական առաջնորդութեանց մէջ ար-
ոտակեդրոն վարմանց առաւել ընդարձ-
ակ և անարգել ասպարէզ գտած կե-
սեկի . Գաւառուներուն մէջ մեր հայերն
իրենց հին սովորութեանց և զգեստնե-
ուն տակաւին սաստիկ յարած են, այն
պէս որ հին կերպերու սովորած մար-
դոց համար՝ զգեստի բարուց և վա-
ստուց մէջ եղած ամենափոքր փոփոխու-
թիւն մ'ալ պարզապէս անկարելիու-
թիւն մ'է . մարդիկ կամ կիներ կը գըտ-
ուին, որոց գլուխը կտրել աւելի դիւ-
ին է, քան թէ գլուխնին վաթթած-
ոգեղ լաթերու կտորուանքը քակել
ուալ . Ե՞ս լու, Ա . վարդապետն այս
մնչնորհ դժևանոցներն անհետացընելու

կաց նկատմամբ ։ Դրան հետ հաս-
տառուած դաշնադրութեանց պայ-
մաններն ինչ ասափիճան պահուած ըլ-
լալուն վրայ տեղեկութիւն տայ : Ասոր
վրայ Տաճկաստամի անգղիական գետ-
պանն եւ քսանութեց հիւպատոսներ
տեղեկագրեր զրկած են, որոց ամենէն
վերջնը մայիս 6 թուով գրուած է :
Տեղեկագրերուն ամբողջ բնադիրները
ձեռքերնիս չունինք, բայց անգղիա-
կան լրագրի մը տուած մէկ հարեւան-
ցի քաղուածին նայելով, անոնց եզ-
րակայութիւնն ասոր վրայ կը կայա-
նայ եղեր որ թէպէտ քրիստոնէից վի-
ճակը մեծամեծ բարոքմանց կը կա-
րօտի, սակայն ազատութեան եւ ար-
դարասիրութեան մէջ ալ փոքր 'ի շա-
տէ յառաջդիմութիւնն եղած է :

Օսմաննեան կառավարութեան
իսաթթի-Հիւմայունը գործադրելու
ջանից մէջ գիտելու կէտ մը կայ , այն
է որ աէրութեան քանի մը գաւառաց
մէջ յիշեալ կայսերական հրամանագ-
րին տրամադրած բարեկարգութեանց
ի գործ դրուիլը պլարզապէս եւ ան-
ժըստելի կերպիւ անհնար է : Ալր Ու-
Տալիել հիւպատոսը կը գրէ թէ Ե-
նատոլուի մէջ , Ուուսիոյ եւ Պարսից
սահմանին մօտերը , ուր տաճիկ ժո-
ղովուրդը վերջին ծայր մոլեռանդ է ,
բարեկարգութիւնը գրեթէ տնկարե-
լի է , եւ կըյիշեցընէ թէ 1853ին Հա-
լէպի եւ 1860ին Դամասկոսի կոստ-
րածները մահմետականաց քրիստոնէ-
լից գէմունեցած նախանձէն եւ Պո-
րանին վարդապետութիւնները մէկ
կողմ դրուած համարելէն առաջ ե-
կած են : Պէրութի հիւպատոսն ալ
ապրիլ 12 թուով կը գրէ թէ յիշեալ
կոտորածին պատճառ եղող մնեռան-
դական ոգին տակաւին ոչ անհետա-
ցած եւ ոչ ալ զապուած է , եւ այն :

Բարձր . Փուտատ փաշան առ լրտ
Այլնս ուղղած մէկ ծանուցագրին մէջ
Երկայրուէն կը բացատրէ թէ Ծանն
դրասթիս համատառ թե ունէն և մէջ
հին կամահաճ դրութեան տեղ օրի-
նաւորութիւն յաջորդած է , եւ թէ
կառավարութիւնը հաստատեալ օրի-
նաց համաձայն կը շարժի , բայց մաս-
նաւոր անհատներու բարուց եւ սովո-

և պարզ ֆէս կրել տարու ձեռք զար-
կած է, և ինչպէս Մեծն-Գետրոս
ուռւսերուն երկայն զգեստներն ու մօ-
լութքները կարծեցուց, ինք ալ գաւառ-
ուականաց գլուխները թեթեցընելու-
գեր ե . բայց ի՞նչ կերպիւ . ո՛վ որ պարզ
ֆէս չդներ՝ Վաշնորդ հայր սուլրին
բարիկութեանը կը հանդիսավի, և նորէն
դպրոց գացածի պէս պատուական ծեծ
մը կուտէ, որով գլուխն ալ հրաշեւք կը
թեթեանայ . Ծաէ որ Դրակոն ինքնին նո-
րէն աշխարհ գար, ասկէ աղեկ միջոց մը
չէր կրնար երեաւակայել մեր գաւառակա-
նաց գլուխները թեթեցընելու .

Աերեի որ Ա . վարդապետը քա-
րող առաւած կամ պատարագ ըրած ժա-
մանակ ժողովրդեան բազմութիւնը կը
սիրէ . բայց արդեօք ժողովրդեան վրայ
ունեցած պղատնական սիրոյն թէ ժա-
մուցի առաւել նիւթական սիրոյն հա-
մար , չենք գիտեր . միայն թէ կը պատ-
մեն որ իր առաջնորդ եղած տեղերը
պատարագ ըրած օրն երբ հարուստին
թէ կը ժամ չերթայ , առաջնորդ Հայր
ուուրբը սաստիկ կը զայրանայ անոր դէմ ,
իմնչե անգամ կը բանադրէ ալ . իր ժո-
ղովրդեան հետ այս կերպիւ վարուող
թէ կը , տեղական իշխանութեանց հետ
ու ի՞նչ քաղաքականութեամբ կը վար-
է կրնայ մակարերուիլ . Վմեն գործի
թէջ խելքին փչած կերպիւ մաս խառ-
ել , կրօնական գլխոյ մը տէրութեան
ողմանէ շնորհուած արտօնութիւնները
արաշար գործածել , և երբ ամբաս-
ուանութեան ներքեւ ի յնալով վաշային

ըութեանց ուղղուիլն ու .քաղաքակրթութուիլը կարծ ժամանակի գործ չէ , եւ այլն , եւ այլն :

Սայրաքաղաքիս անդղիական դես-
պան լրտ Ա այլնս ալ մայիս 6 թուով
առ լրտ Աթանի ուղղած ծանու-
ցադրիմը մէջքրիստոնէից վիճակը նը-
կարագրելով կը որ թէպէտ քրիս-
տոնեայները թուով ուսմամբ եւ հա-
րըստութեամբ տաճիկներէն առաջ
անցնելու վրայ են, սակայն թէ՛ անոնք
թէ՛ տաճիկները կառավարութեան
պատճառաւ քանի մը նկատմամբք
նեղութիւն կը կրեն. թէ քրիստոնէից
գանդատանաց մեծ մասը կառավարու-
կան դէշ գրութենէն առաջ կուգայ,
որ տաճկաց եւ քրիստոնէից հաւասա-
րապէս վասակար է. թէ (Օ)սմանեան

կառավարութիւնը պիտք է որ հեռաւ-
տեսութեամբ ապագան բարւոքէ .
թէ երեսուն տարուլնէ 'ի վեր մեծ
յեղափոխութիւններ եղած են, բայց
դարաւոր կերպիւ տաճկաց սովորած
հրամայական եղանակին ու քրիստո-
նէից նուաստութեան նշանները տա-
կաւին բոլորպին անհետացած չեն,
ուստի եւ քրիստոնէից վիճակը բաղ-
ձայուածին չափ լաւ չէ . թէ տաճիկ-
ներն իրենց հպատակներն իրենց հա-
ւասար համարիլ չեն ուզեր եւ քրիս-
տոնէից անձնասիրութիւնը ասկէ կը
վիրաւորի . թէ քրիստոնեայները տա-
կաւին տէրութեան ստորին պաշտօն-
ներուն մէջ միայն դործածուած են .
թէ քրիստոնեայները զինուորական
ծառայութեան չեն մասներ, այլ փո-
խարինութիւն մը կը վճարեն . թէ այս
վերջին տարիներս աւելի յառաջդի-
մութեան նշաններ տեսնուած են եւ
կառավարութիւնը միշտ կը խոստա-
նայ քրիստոնէից վիճակը բարւոքել,
եւ թէ Խարձը . Քուատ փաշային ծա-

նուցադիբն իրաց վիճակն առաւելշող՝
շողուն գոյներով կը նկարագրէ, ուստ
ափ եւ ինք ալ անոր ամեն կէտերուն
չկընալ երաշխաւորելուն՝ թէ՛ հին
պատասխան հնաւագատութեան ընթաց
ըն եւ թէ՛ Օմաննեան պաշտօնաւ
տարաց ցոյց տուած պատճառներն
Անդ-Ղիոյ կառավարութեան արդա-
րախոհ կը ադառութեանը կը յանձ-

Անդղիական հիւպատոսներուն
քանի մը գաւառուաց մէջ բարեկարա-
գութիւնն անհնար ցոյց տալլ մասամբ
իւիք կրնայ ճշմարիտ ըլլալ. բայց կար-
ծենք այնպիսի երկրի մը մէջ՝ ուր կա-
ռավարութեան կամքն ամենազօրա-
ւոր է, անոր բարեսէր նպատակները
չեն կրնար անդործադրելի մնալ: Աս-
կայն բարեխնամ տէրութեան օրէնքն
ու հրամանները կատարելու համար
շատ անդամ իմաստուն ձեռնհաս եւ
քաղաքադէտ պաշտօնեայներ կը պակ-
սին, մանաւանդ հեռաւոր գաւառուաց
մէջ: Միկա ալ գաստիարակութեան
եւ ժամանակի խնդիր՝ մ'է, որոյ լուծ-
մանը յոյս ունինք որ մեծապէս կը-
նան նպաստել Ալիայէթներու կաղ-
մութիւնն ու գաւառուական ընդհա-
նուր ժողովները՝ եթէ բանիքուն ան-
դամներ ունենան:

Փարիզ 12 յունիս .
Ոռուսիոյ կայսրը երէկ մեկնեցաւ : Եթ-
կու կայսրերն իրարմէ բաժնուած ժամանակ-
նին խիստ սիրալիր կերպով պագտուեցան :
Բրուսիոյ թագաւորն ալ ուրբաթ օրը
պիտի մեկնի :

Նիւ-Եօրք 14 յունիս .
Էսքօպէտօ՛ ծուռքէզեան զօրապետը՝
պատերազմական ատեանի մը հրաման ըրաւ-
որ Մաքսիմիլիանոս կայսը դատէ :
Փարիզ 12 յունիս .
Մօնիթէոռ կրու թէ Ոռուսիոյ կայսեր

Օսմանյան զիրքը թէ լուսարկող վայութ
 կենաց գէմ փորձուած ոճիրը՝ երկու կայս-
 րութեան եւ երկու վեհապետաց բարեկա-
 մութեան եւ վատահութեան կապերն ամրա-
 ցընելու պիտի ծառայէ :

Օսմ. Քօնսոլիսէ
 Փարիզ 34 75—34 85
 Լոնսարա 34^{1/2}—34^{1/2}
 Օսմ. դիսի . 1865ի 263 75

Փարիզ 13 յունիս .

Ֆազիլ Մուսթաֆա փաշան Զուլիցցերիա
 գնաց . Կը հաւասարեն թէ քիչ օրէն Փարիզ
 պիտի գտառնայ Վ. Սուլթանը գիմաւորելու .

Օսմ.
 Փարիզ 34 75—34 60
 Լոնսարա 34^{1/4}—34^{1/8}
 Օսմ. մասն . 1865 4 263 75 . 269 50

մարդուն սրտին խորհուրդը ծածկելու
և ոչ թէ ծշմարիտը խօսելու համար։
Եթէ հրատարակութեան լուսոյն առ
ջեւ տակաւին շատ սեւ գործեր կը կա-
տարուին, ինչե՞ր չեն կրնար ըլլալ լո-
ռութեան մութին մէջ։ Ուէ որ Հինձք
զիւղին մէջ կուտաւորչական երիտա-
սարդի մը կրօնքն ընդունելով անոր հետ
ամուսնացող աղջեկին իր նոր փեսային
հետ խորդելու մասնակից ամբաստանուած
վարդապետը գիտնար որ իրեն պէս մէ-
կու, մը պաշտպան կանգնող ըպիտի դրու-
նուի, անշուշտ աւելի մարդկային և
նուազ կրօնամոլ զգացմամբ կը շար-
ժէր։ Ի՞նչ վեաս կայ պակասութիւն-
ներն այսպանելու և կատարելութիւն-
ները գովիելու մէջ, և միթէ մոտաց գո-
յութիւնն ուրանալ չէ՝ մարդոց մէկ
դասուն գոգցես գերբնական զօրութիւն-
մը տալ և զանոնք քննադատութենէ
և հետեարար ամեն սխալմունքէ վեր
համարիւ։ Այեր խելքը չհասնիր թէ
ոչ ու առ առ առ առ առ առ առ առ առ

Եհաւասիկ մեք մեք տէրտէրներուն և վարդապետներուն վրայ տեսնուած պահասութիւնները կը քննագատենք, ո՞վ ինչ կըսէ թող ըսէ, թէ և բամբասանքն ալ բնաւ չենք ընդունիր, և բարի վարուց տէր, ուսումնական և ազգասէր եկեղեցականները կը յարդենք ու կը գովիճնք. Խնդիրն ասոր վրայ է թէ ի՞նչ պատճառաւ եկեղեցական մը, պարզապէս եկեղեցական ոլլայուն հանոր, իր անսպարհեցա կամ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ապասերականն Խզդէտախին շողենաւը
չորեքշաբթի օրը Կիրիտէն գալով ար-
քունի նաւարանք մասւ նորոգուելու :
Կըսուի թէ հելլենականն Աքքատի շողե-
նաւին ետևէն համառղեա զայն ոմքակու-
ծողն այս շողենաւն էր, բայց ինք ալ-
քանի մը ուումբ ուտտելով թեթև կեր-
պիւ զնասուեր է եղեր :

Իզգէտարին շողենեաւը նուև անցեալ
շարաթ օրը Բարձր . Խօմէր փաշային
և ապստամբաց մէջ եզած պատերազմի
մը տեղիկադիրը բերաւ, որուն մէջ վեր-
ջնները չարաչար յաղթուած և մեծ
կորուստ կրած են . Բայց Ռթէնքէն
եկած լու բերն՝ իրենց սովորութեան հա-
մեմատ՝ յաղթ ութիւնը դարձեալ ա-
պատամբներուն կուտան .

“Բանի մ’օրէ ՚ի վեր խօսք կրյալ

թէ կ. Պոլսոյ մէջ հարիւրատոր անձննք
ձերբակալ ըլլալով բանտարկուեր են :
Այս առթիւ պտղատած անտեղի զրոյց-
ները լոջաբար հեղուուելու անարժան են :
Բաւական է, միայն իմացընել թէ բըռ-
նուած մարդոց թիւը 15 էն աւելի չէ ,
և թէ մէջերնին բնաւ Խւլէմա չկայ :
Այս անձանց զբաղմունքը փիլխոփայա-
կան քարը գտնել չէր . ուստի և ան-
օգուած կը համարինք աւելցնել թէ
ազգային ժողովի գաղափարը՝ որ կը տըր-
ւի իրենց և որուն փրայ հաւանակա-
նաբար ծանօթութիւն իսկ չունին , ի-
րենց ձերբակալութեան ու բանտար-
կութեան պատճառներուն հետ բնաւ
յարաբերութիւն չունի : »

Ա Եվնթ Հերըլտ կը ծանուցանէ
թէ օտարազգի անձանց Տաճկաստանի
մէջ կալուածատիրութեան իրաւունք
չնորհելու հրովարտակը, նոյնպէս Ա ա-
զը վնելու բարեկարգութիւնը լրացը-
սու որբ օրէնքը հինգշաբթի օրը օգոս-
տափառ Խնդիակալին բարձր հաւանու-
թեամբ վաւերացան, և հաւանակա-
նորար քանի մ'օրէն պիտի հրատարակ-
ւին:

անվայել վարուց համար ուրիշ մարդոց պէս չախտի քննադատուի . Թաէ որ աշխարհական զեղծմանց գէմ հրատարակութեան զօրաւոր թումբ մը ըլլալն անժմիստելի է . անժմիստելի է նաև որ եկեղեցական զեղծմանց գէմ ալ թումբ մ'է . Արդէն Եւրոպայի մէջ այս մասին եկեղեցական աշխարհականէն տարբերութիւն չունի . բայց եթէ հայոց մէջ կաթոլիկ կղերը մինչև յարդ աւելի վարկ և համարում ունեցած է , ասոր պատճառն ուրիշ բան չէր եթէ ոչ ժողովրդին ագիտութիւնը . Մինչև յարդքերանաբաց ապշութեամբ կը նայէինք այն վարդապետներուն վրայ , որք գաղղիերէնէ կամ խոսներէնէ ՚ի հայերէն թարգմանութիւն ընել գիտէին (թէ և ոչ ամենքը) , մօրուքնին աղուսոր կը սանուրէին , զգեստանին աւելի լու կը յարմարցընէին , քիթերնին ակնոց և գլուխնին շլարշ կը կրէին , և փողօներուն մէջ նապերով կը շրջէին . Բայց հիմա տակաւ առ տակաւ ցնորքը կը փարատի , Միիթարեանց իսկ համարումներթալով վկանէ , (Թաէ ոդորեան Սարդիս վարդապետն անոնց գաղանի վէրքերն ու պահասութիւնները կը բանայ) , և հռոմէական աղջկանազ վարդապետներն ալ , Կռւաւորչականաց մէջ գտնուած ագէտ կամ անկիրթ եկեղեցականներէն աւելի ազատ չեն կը բնար մնալ քննադատութեան խարիչ երկաթէն :

Կիշերին սխալականութեան վայ
դառնալով, Պապին սխալից Պապի մը:

• . . . 8էր, մասնաժողովս կը խնդրէ		
միանդամայն ջեր մեծապատռութենէն որ		
դուք ձեզէն հաղորդէք հասարակութեան		
հետեւեալ ծանօթութիւնները, այսինքն՝		
թէ մասնաժողովոյ անդամները հանդիսին		
հասոյթ ազգային հաստատութեան մընը-		
պաստ ըլլալուն համար՝ իւրաքանչիւրն ի-		
րենց թէ կերակոյ և թէ երթեւեկութեան		
տոմսակաց գինը վճարած են : թէ Հիւն-		
քեար-իսկէսին հաւքուած փարզաբինը		
մասնաժողովոյս յատուկ խնամօքն էր որ		
Մանզումէի մէջ «հիւանդանոցի հոգաբար-		
ծութեան շնորհիւ» գրուած էր : Գ. Կե-		
րակոյ-տոմսակներուն թիւը 78 գրուած է		
թէպէտ, ինչպէս որ նոյնչափ ալ ծախուած		
է, սակայն կիմացընենք որ 30ի չափալ հը-		
րաւիրեալ կային՝ որոնցմով սեղանը լի կը		
տեսնուէր : Դ. Օֆանդակ ընկերութեան		
ընթերցարանը հաւքուած 616 զուրուշը		
մասնաժողովոյս նուէրն է, որ Մանզումէի		
մէջ Օֆանդակ ընկերութեան սեղական-		
ւած է : Ուստի մասնաժողովոյս ջանիւքը		
Ս. Փրկչի հիւանդանոցին նպաստ եղած		
գումարը հետեւեալն է :		
Տոմսակներէն եղած հասոյթը	1196/2	
Վարդագին	737	
Օֆանդակ ընկեր. ընթերցարան	616	
Գումար	2569/2	
Ասկէ զատ, . . . խմբագիր, Մանդու-		
մէի 365 թուոյն մէջ Խ. Ա. Պ. Ստորագրու-		
թեամբը նամակին պատասխանը* ներփակ-		
եալ առ ձեզ ուղարկելով կը խնդրենք որ		
նոյնը ձեր պատուական օրագրոյն է ջերուն		
մէջ զետեղելու շնորհն ընէք հանդերձ ձեր		
ազատ դիտողութեամբը, որուն համար ըդ-		
մեզ շնորհապարտ կը կացընէք :		
Ի դիմաց մասնաժողովոյ		
Տ. Գ. Անանեան		
Յ. Գ. Վարդագինը՝ Անանեան Մէծ.		
Պողոս էֆէնտիին եւ Մաքսուտեան Մէծ.		
Յարութիւն է թէնտիին յանձնեց մասնաժո-		
ղովս նոյն զրոսավայրը. իսկ Օֆանդակ ըն-		
կերութեան ընթերցարանը հաւքած նուէ-		
րը Մէծ. Զարդարեան Գաբրիէլ աղայի ձե-		
ռոք հիւանդանոցի հոգաբարձութեան զըր-		
կեց : Տարեդարձի հանդէսէն գոյացած հա-		
սոյթն ալ հոգաբարձութեան Մէծ նոր խա-		
նը ունեցած սենեակը անձամբ տարաւ յանձ-		
նեց :	(Նոյն)	
ՀԱՅՈՒԵՑՈՒՑԸԿ		
Եօթերորդ ՏԱՐԵԴԱՐՁԻ		
ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ		
1867 Մայիս 31		
ՄՈՒՏՏՔ		
Տոմսակներէն եղած հասոյթը.		
Երթեւեկութեան տոմսակն 623 հատ 6875		
Կերակոյ » 78 » 4746		
Պիւֆէ	330	
	8924	
ԵԼՔ		
Շողենաւու վարձք 28 ոսկի	3080	
Մասամբ. վրան, ցանկ, կամար իր		
* Անրկայ թերթիս մէջ տեղ չըլլալուն		
համար՝ երեքարթի աւուր կը թողունք		
հրատարակութիւնը :	Ծ. Խ.	
վրայ	2444	
Խոհարար	900	
Տպարան	220	
Դաբնի	88	
Երաժշտաց	550	
Նաւապետին նուէր	176	
Շոգենաւու մէմուրին նուէր	110	
Խավազներուն »	44	
Քամարօթին »	44	
Հաւքուելիք վարդագնոյ համար վարդ	35	
Տոմսակ ծախելու համար Մանզումէի		
ցրուիչին քօմիսիոն	49-20	
Սպասաւորի վարձք (Նշան Յօհաննէս-		
եան)	67	
Այլ եւ այլ մանր ծախելու	217	
Ս. Փրկչի հիւանդանոցին յատկացած		
հասոյթը	4196-20	
	8924	
Վասն ճշգութեան հաշուոյս ստորագ-		
րեմք անդամիք մասնաժողովոյ տարեդարձի		
Տ. Գ. Անանեան Յ. Մանլէւան Գ. Հայրացւու-		
Գրիգոր Կոբոսեպեան	Էն	
“ . . . խմբագիր .		
“ Մայիս 16ի օրաթերթինիդ նամակ		
մը կը պարունակէ ՚ի պատասխանի մայիսի		
6 շաբաթաթերթուլ հրատարակած նա-		
մակիս :		
“ Ու թէ ստորագրութեանս այլա-		
փոխուելուն՝ որոյ անշուշտ մատղիսու-		
թիւն չէ եղած, հասպա նամակին եղած,		
նակին վայ քիչ մը զարմանալու պար-		
տաւորեցոյ երբ վայն կարդացի :		
“ Մրգոյ նամակագիրը մեր հարցմանց		
իրեն վերաբերիլ նշմարելով փութա-		
ցեր է. երկու կէտերու պատասխանել		
այնպիսի պատճառարամութիւններով		
որք հետեւեալ կերպիւ կը համառօտին :		
“ Բէրայի Թաղող, գործոց գարձ-		
ւածներն արգելք եղել են շնորհեան		
գործին կարդադրութեանը : Միւնինի-		
բալթէն ալ միշեալ գետինը փողոց ը-		
նելու կամք յայտնած ըլլալով՝ շնոր-		
թեան հրամանը չէ կըցեր առնուիլ,		
ուստի և արժանաւոր փոխարինութեամբ		
հիւանդանոցի օգուտը մտածելով Միւ-		
նիսիրաբիթէ յի հետ բանակցութեան		
մտնել հարկ եղեր է, բայց բանակցու-		
թեան արդիւնքն ուշացեր է (միշտ) թա-		
զին ազգային գործոց տարտամ վիճա-		
կին պատճառաւ :		
“ Այս պատճառնելը որբան ալ իւ-		
րականութեան մոկերեցիլ մ'ունենան,		
բայց և այնպիս հիւանդանոցի կորու-		
սած առաւելութիւնները փոխարինե-		
լու ամենելին անբաւական են :		
“ Պատճառն մը որ իւր յարմար գրու-		
թեամբը 1000 ոսկի ծախքով տարին շ		
-3 հարիւր ոսկի վարձք կը թերեւ, պէտք		
է այդպիսի գետին մը թողըւլ իւր ամ-		
լութեան մէջ այնպիսի պատճառներու		
համար, որոնք օրչափ նկատուին և յար-		
գոււին՝ այնչափ ևս մնասակար կըլլան		
հիւանդանոցի շահերուն պէտք է դար-		
ւար մը արդիւնքն այդպիսի գարմար կա-		
մանակար հորդաց, զարմանք կա-		
մարդարաբար այդպիսի մէջ փո-		
յայմանակար կարդադրութիւնը առաջա-		
անակար կը յանդիմարքեմ Մասիսի մի-		
ջոցաւ, բայց այդ պարագային մէջ փո-		
խանորդաբար :		
“ Առ այժմ կաղաչեմ որ ձեզ ուղ-		
ղած մեծարանքներն մատուցանէք առ		
Մէծ. էֆէնտին :		
27 մայիս 1867	Ս. Գ. Պարոնօֆ	
Յ. Գ. Կարոլոս իշխանին նուի-		
րած 100 ոսկիներուն համար ո՞վ պիտի		
պատասխանէ :		
Ա. Պ. Պոլիս յունիս 1867	Ա. Պ. Պարոնօֆ	
Յ. Գ. Կարոլոս իշխանին նուի-		
րած 100 ոսկիներուն համար ո՞վ պիտի		
պատասխանէ :		
Ա. Պ. Պոլիս յունիս 1867	Ա. Պ. Պարոնօֆ	
• . . . խմբագիր .		
Մայիսի 2 յունիս 1867	Ա. Պ. Պարոնօֆ	
• . . . խմբագիր .		
Մայիսի 2 յունիս 1867	Ա. Պ. Պարոնօֆ	

ԱՆԵԿԱՏԱԿԱՆ

ԴՐԱՄՈՅ ԱՐՔՈՂՈՒԹԻՒՆԸ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ	Հինգ շր.	Ուրբաթ
3 ՅՈՒՆԻ	25	26
Օսմանեան լիրա Մէջ . . .	104	104
Քսաննոց արծաթ . . .		
Էնհարժ ունկնամիկ . . .	37-22	37-5

Journal of Clinical Oncology, Vol 3, No 2 (February), 1985

H E R S H

Յորեն Թայղան կարծր	36—38
» Խսմայիլ »	35—37
» Ռում. Պալչըք	30—31
» Վառնա	31—33
» Իպրայիլ կակուզ	32—33
» Կալաց »	—
» Պուրկաղ »	35—36
Եղիպտացորեն կալաց	—

Ա Ր Ե Վ Ո Ւ Թ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ

» Երկան » 560-580
Շաքի հօլսան ֆրանք յօ

» Պարսկան

ՆԵՐՔԻՆ ԲԵՐՔ

Համզակ	Պալըքէսէր	հօլայ	Դուբուշ
»	Կէրիէ	»	-44-20
»	Աստիսա	»	-43
»	Ուստանան	»	10-20-44
Բուրդի	Լնկիւրի լուացուած	»	-44-20
»	» չլուածառծ	»	-8
»	Պանտըրինա չլուայ	»	-8
Ճէրի	Լնկիւրիւ	»	-42
»	Թոխատ	»	-42
»	Չորում	»	-09
Մազը	սեւ	»	13-14
»	Ճերմակ	»	9-10
Թիֆթիք	Լնկիւրիւ	»	30-40
ԱփիօնՊալըքէսէր	»	»	-230
Քիթրէ	Տերեւ բանուած	»	25-30
Սալէպ	Տաճկաստանի	»	15-17
Մեղրամում	դեղին Տրապի	»	-23-20
»	» Անատօն	»	-23
Սուօսմը	Ռումէլիի	»	-0
Կտաւատի	հունտ Ռում	» Քիլէ	-
»	» Պանտրմա	»	-
Զէթ	Այլըլըդ	հօլայ	8
»	Կիրիտ	»	8
Աձառ (Ասպօն)	Պանտիսա	»	7
»	» Միտիլի	»	6
Բրինձ	Եգիպտոս Բէշիտ	»	4
»	Տիմեաթ	»	-

ԱՐՏԱՔԻՆ ԲԵՐՔ

Խամացիւն Ոլիո եւ զամփո 100 հօլս.	740—930
Շաք . դլուխն-10լտ. կնդ. »	—
» Փոշիւ » »	280—295
» Հող . դլուխ » »	—290
» Փոշիւ » »	228—232
Գաղղլ . դլուխ » »	280—295
» Փոշիւ » »	—230
Անագ (դալայ) » »	650—665
Պղպեղ (պիպէռ) հօլսայ	5—20— 6
Լեղակ (չիվիտ) Պէնկալա »	420—425
» » Մատրաս »	— 75
Անուշաղը (Նըշատըր)	— 620
Պողպաս (Գէլիք) սնտուկ	—180
Կապար (Գուրշուն)	— 320
Թիթեղ (թէնէքք) դոյդ մնոս. »	330—335
Զինք տախտակ թիւ 7—12 Հիյ	— 520
Երկաթ Անդ . ձողածեւ կնդ.	66—70
» Տախտակ 1—14 »	—100
» Բեւենոցու »	72— 74
» Բոլորակ »	135—140
» Ուռսիոյ »	120—130
Քարֆիձա Վարիլ 39 Հիյ.	95—142
Խւթիւպէճ ձէն. զոյդ Սնտ.	—250
» Պէլճ. »	
» Թրէխսթ »	
Աբառմաչիթ Վիշնա հօլսան	— 45
» Թրիկստ եւ Գաղղ. »	— 14

Մասիս լրագրոյ բաժանորդագրութեան
ուղղերն են կ. Պոլիս Զինիլի խանը վերի
արկը թիւ 7 Մասիսի խմբագրատւնը :
Իսկ զաւառաց մէջ հետեւեալ հոդա-
սարձուաց սենեակները :
ԻԶՄԻՐ . Յարութիւն աղա Տէտէեան .
ՆԻԿՈՍԻԱՏԻՍ . Պ. Խոսրով Թ. Էսկի-
եան .
ԱՏԱԲԵԶԱՐ . Պ. Յակոբ Սալահորեան .
ՏՐԱՊԻԶՈՆ . Պ. Խաչատրուք Էլմասեան .
ԽՈՅԵ Խաչատրուք Խաչատրուք Պ.

ԵԱԾ : Մ. աղա Խաչիկեան :

ՀԱԼԵՊ. Նիկողայոս աղա Տէր Մարդարկան :

ԵՐԶՆԿԱՅ. ԸՆԹԵՐԾԱՄԱՀԻՐԱԳ ԹՎԱՆԳԱՐԱԿ
ՎԱՆ. ԳՐԻՎՈՐ աղա ԽԱԱԾԱՆՆԵԱՆ.

Ուրիշ քաղաքներէ ստորագրուիլ ու-
ղողները այս տեղերէն մէկուն հետ կընան
Առնենիւ .

Խոմբագիր-Տնօրէն

Կ . Ս . Ի Թ Թ Ի Հ Ե Ա Ն

Կ. ՊՈՒԽ ԶԻՆԻԼԻ ԽԱՆ